

**ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/141L
15/03/2005**

**ՀՀ ԿԲ ԲԱՅԱՌԱՊԵՍ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ 2.500.000 ԳՐԱՄ ԳՈՒՄԱՐԸ
ԳԵՐԱԶԱՆՑՈՂ «ՀՀ ԿԲ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 13-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԳՆՈՒՄՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սույն որոշման տեքստի մեջ ներառված է ՀՀ ԿԲ նախագահի
17.04.2006թ. թիվ 1/272L որոշումով կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդված /ա/ կետի դրույթները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացառապես մրցույթային կարգով իրականացնել 2.500.000 դրամ գումարը գերազանցող «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործառնական ծախսերի շրջանակներում իրականացվող գնումները:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված մրցույթները իրականացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 10.05.2004թ. N 1/206 L և 29.04.2004թ. 1/180 L որոշումներով հաստատված, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող փակ մրցույթների կազմակերպման մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթների իրականացման մասին» կանոնակարգերով սահմանված կարգով:

3. Առանց մրցույթների հայտարարման, սույն որոշման 1-ին կետում նշված գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2004 թվականի մայիսի 13-ի թիվ 1/224L որոշմամբ ստեղծված ՀՀ կենտրոնական բանկի մրցույթների անցկացման հանձնաժողովի համապատասխան որոշմամբ՝ միայն խիստ հրատապության դեպքում կամ եթե գնման անհրաժեշտությունը պայմանավորված է արտակարգ և չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով կամ եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ:

4. Սույն որոշումը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 05.03.2002թ. թիվ 128 հրամանը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

